մասին ո՛չ մի խօսք: Դեռ աւելի· իր առաջին գրքում — «Նոր տեսրակ որ կոչի յորդորակ» — նա բացարձակապէս ժխտում է ազատամբութեան միտքը, համարելով դա քրիստոնեային անվայել մի բան: «Մենք չենք ասում — գրում է նա — որ հայերն ազատամբեն այլազգիների կամ իրենց կառավարիչների դէմ եւ աչք դնեն նրանց ստացուածքի վրայ եւ կամ վնաս տան նրանց: Բա՞ւ լիցի· դա քրիստոնեայի գործ չէ»1):

Դրա փոխարէն նա առաջարկում է մի շարք կրաւորական (պասսիւ) միջոցներ, եւակէտ ընդունելով այն գաղափարը, թէ ազատութեան առարկան հանդիսացող հայ ժողովուրդը ինքը չի, որ պիտի ազատագրի իրեն, այլ ուրիշները: Նա, անշուշտ, ի նկատի ունի վրաց Հերակլ Բ·ին եւ վրացական զօրքը, ուստի եւ հայ ժողովրդի ազատագրութեան գործը ամբողջովին յարմարեցնում է այդ ծրագրին: Հայ ժողովուրդը իր ազատութեան պայքարի մէջ — նրա կարծիքով — պիտի լինի միայն վերջին ջութակահարը եւ իրրեւ այդպիսին, նա պիտի բաւականանայ միայն մի շարք մանր-մունր պարտականութիւններ կատարելով:

Ահա թէ ինչո՛ւ նրան այդքան հեշտ է թըւում Հայաստանի ազատագրումը:

Այսպէս, նա միամտօրէն կարծում է, որ բաւական է միայն, եթէ հայերն ուզենան ազատ լինել եւ կ՚ազատուեն, որովհետեւ դրանով ոչ ոքի մի վնաս չեն տալիս, այլ միայն իրենց արդար իրաւունքներն են ուզում պաշտպանել: Իր միամտութեան մէջ այնքան առաջ է գնում, որ գանում է, թէ Հայաստանի տէրերն անգամ — ներկայ դէպքում՝ տաճիկներն ու պարսիկները — դէմ չպիտի լինին հայ ժողովրդի ազատագրման փորձերին, որովհետեւ նա՝ հայ ժողովուրդը ոչ թէ մտածում է ուրիշներից հողամասեր խլել, այլ ցանկանում է միայն իր հայրենի ժառանգութիւնը, իր սեպհական երկիրը յետ ստանալ եւ ուրիշ ոչինչ: «Իմ այս խորհուրդը — այսինքն՝ Հայաստանի ազատագրումը — թող հակառակ եւ անիրաւ չթուի մեր բռնաւորներին2) որովհետեւ դրանով մենք ուզում ենք միայն տէր լինել մեր աշխարհին, թոյլ չտալով, որ մի քայլ ուրիշների երկրներից աւելանայ մեր երկրին կամ մերինից պակասի: Հետեւաբար աշխատելը եւ հայոց սեպհական ժառանգութիւնը յետ ստանալը ոչ միայն անիրաւութիւն չի, այլ արդարութիւն է» (139):

Ուրիշ ազգերի պատմութիւններից նա օրինակներ եւս ունի, որ բաւական է միայն բարի կամք եւ ժողովուրդները կ՚ազատագրուեն: Այսպէս, նրան յայտնի է հին Հռոմի պատմութիւնը, որը միմիայն 42 մարդով սկսելով, տիրեց ամբողջ աշխարհի 3/4-ին եւ բազմաթիւ ժողովուրդների «երջանկութիւն» բերեց: Նա գիտէ, որ Կանդահարի Միր Վէյիս իշխանը միայն 12 հազար զօրքով, որի մեծագոյն մասը «բոբիկ եւ ձին առանց թամբի», նուաճեց հսկայ Պարսկաստանը, Սպահանում փակելով պարսկական 80 հազարնոց բանակը: Նրան յայտնի է, որ Բակտրիացի Բէրիմ Խանը չնչին ուժերով մեծ Պարսկաստանը նուաճեց եւ մի նոր անկախութեան հիմքը դրեց: Եւ վերջապէս նա իր օրով տեսնում է, որ փոքրիկ Ամերիկան կռուի է դուրս եկել մեծ Անգլիայի դէմ՝ իր ազատութիւնը եւ անկախութիւնը պաշտպանելու համար: Ճիշդ է, այս կռուի վախճանը դեռ եւս յայտնի չէ ,բայց փաստն ըստ ինքեան բաւական էր նրա առջեւ որոշ հեռանկարներ բաց անելու:

Այս ամէնից յետոյ ինչո՞ւ ուրեմն հայ ազգն էլ չպիտի կարողանայ իր ազատութիւնը ձեռք բերել, եթէ ցանկութիւն ունենայ: Դա ոչ անկարելի է, ոչ էլ դժուար բան է: «Անհնարին եւ շատ դժուար բան չի մի ամբողջ ազգի համար՝ բռնաւորներից ազատութիւն ձեռք բերել եւ իր երկիրը նրանցից ազատել» (139) — գրում է նա:

Բայց հայ ժողովուրդն իր փրկութեան համար մի ուրիշ անելիք էլ ունի· հարկաւոր է, որ նա գիտակցի իր պարտականութիւնը եւ կատարի: Իսկ դրանից հետո բան չկայ, եթէ մարդ մի կողմ թողնի ծուլութիւնը, որովհետեւ պարտականութեան կատարումը «ոչ կրօնին է ընդդէմ, ոչ անձի վայելչութեան է անպատշաճ, ոչ տների շինութիւնների աւերումն է նա, ոչ էլ ոսկու, արծաթի եւ ունեցուածքի ծախս է պահանջում» (28):

1) Լէօ՝ «Հայկ· Տպագր·» Բ·

2) Բռնաւոր բառը գործ է ածում սովորական տիրողի իմաստով: